

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտուրա մրցութային հիմունքներով գիտությունների թեկնածուների պատրաստման նպատակով (Doctor of Philosophy- Ph.D.) ընդունվում են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության, ԱՊՀ երկրների և այլ օտարերկրյա երկրների քաղաքացիներ: Ասպիրանտուրայում գիտահետազոտական կադրերի պատրաստմանը թույլատրվում են այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն՝ դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի: Այն անձինք, ովքեր ունեն ասպիրանտուրան ավարտելու մասին վկայող դիպլոմ կամ գիտությունների թեկնածուի դիպլոմ, իրավունք չունեն գիտահետազոտական կադրերի պատրաստման նպատակով ասպիրանտուրայում երկրորդ կամ հաջորդիվ բարձրագույն կրթություն ստանալ պետական բյուջեի կողմից գումարի հատկացմամբ, ՌԴ սուբյեկտների և տեղական բյուջեների հաշվին: Քաղաքացիների ընդունելությունը ասպիրանտուրա իրականացվում է մրցութային հիմունքներով: Ասպիրանտների պատրաստումը իրականացվում է ուսման երկու ձևով՝ առկա և հեռակա: Առկա ասպիրանտուրա աշխատանքից ազատվելով մրցության հիմունքներով ընդունվում են բուհերի շրջանավարտների և մասնագետների թվից Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության այն քաղաքացիները, ում տարիքը չի գերազանցում 35-ը, իսկ հեռակա՝ 45-ը, ովքեր ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, ովքեր աշխատում են բուհերում, ձեռնարկություններում, այլ կազմակերպություններում և հիմնարկներում, ինչպես նաև նրանք, ովքեր ունեն գիտահետազոտական ստեղծագործական ձեռքբերումներ:

**ՀՀ Կրթության և գիտության նախարարության որոշմամբ առկա ասպիրանտուրայում ուսումը տևում է 3 տարի, իսկ հեռակայում՝ 4:**

**ՌԴ Կրթության և գիտության նախարարության որոշմամբ մաթեմատիկական, բնագիտական և տեխնիկական մասնագիտություններով առկա ասպիրանտուրայում ուսումը տևում է 4 տարի, իսկ հեռակայում՝ 5:**

**Սոցիալ-հումանիտար մասնագիտություններով առկա ասպիրանտուրայում ուսումը տևում է 3 տարի, իսկ հեռակայում՝ 4:** ՀՀ քաղաքացիների և իրենց հետ հավասար իրավունք ունեցող ՌԴ քաղաքացիների ընդունումը ասպիրանտուրա ըստ պետբյուջեի հատկացված տեղերի իրականացվում է մրցութային հիմունքներով ըստ ապիարանտների ընդունելության ծրագրի, որը հաստատված է ՀՀ գիտության և կրթության նախարարության և ՌԴ գիտության նախարարության կողմից: Օտարերկրյա քաղաքացիները՝ ի թիվս ԱՊՀ քաղաքացիների, ընդունվում են ասպիրանտուրա ՀՀ բյուջեի և ՌԴ բյուջեի հաշվին ՀՀ և ՌԴ կրթության և գիտության նախարարությունների կողմից ուղղորդման առկայության դեպքում: ԱՊՀ երկրների և օտարերկրյա քաղաքացիները՝ ըստ ՀՀ և ՌԴ միջազգային պայմանագրերի և միջկառավարական համաձայնագրերի կամ ուղիղ կապերով արտասահմանյան կազմակերպությունների հետ, որոնք նախատեսում են վճարել իրավաբանական և

Ֆիզիկական անձանց ուսման լրիվ վարձը, ինչպես նաև ՀՌՀ ռեկտորատի կողմից հավելյալ ծառայությունները, կարող են ասպիրանտուրա ընդունվել:

*Ասպիրանտուրա ընդունվողները պետք է ներկայացնեն հետևյալ հիմնական փաստաթղթերը՝*

- ՀՌՀ ռեկտորի անունով ասպիրանտուրա ընդունվելու դիմում:
- Բարձրագույն կրթության դիպլոմի և հավելվածի պատճեն (արտասահմանում կրթություն ստացած անձանց համար՝ ի թիվս ԱՊՀ քաղաքացիների, համապատասխան դիպլոմի պատճեն, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրված օտարերկրյա պետության կրթության փաստաթղթերի՝ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմին համապատասխանությունը հաստատող վկայականի պատճեն):
- Հրատարակված գիտական աշխատանքների, գյուտերի և գիտահետազոտական հաշվետվությունների ցուցակ: Այն անձինք, ովքեր չունեն գիտական աշխատանքներ և գյուտեր, ներկայացնում են ռեֆերատներ ըստ ընտրած մասնագիտության:
- Ասպիրանտուրա ընդունվողի կողմից թեկնածուական քննություններ հանձնելու դեպքում վկայական (այն անձանց համար, ովքեր հանձնել են թեկնածուական քննություններ արտասահմանում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրված վկայական առ այն, որ ներկայացվող փաստաթուղթը օրինական ուժ ունի):
- Անձը հաստատող փաստաթղթի, գորակոչիկների համար զինվորական գրքույկի (գրանցման վկայականի) և աշխատանքային գրքույկի պատճենները:
- Հարցաթերթիկ և ինքնակենսագրություն (ձեռագիր՝ ռուսերենով):
- Առողջության մասին տեղեկանք:
- 3 լուսանկար (3X4 չափսի):
- Ֆակուլտետի գիտական խորհուրդի կամ բուհի գիտական խորհուրդի արձանագրությունից քաղվածք այն անձանց համար, ովքեր ուղղորդվում են ասպիրանտուրա անմիջապես բուհը ավարտելուց հետո:
- Բնութագիր աշխատավայրից :
- Աշխատանքային գրքույկից քաղվածք(առկայության դեպքում):

Հավելյալ փաստաթղթերի ցուցակ՝

- Ռեֆերատ ըստ մասնագիտության,
- Ամբիոնի գրախոսությունը տվյալ մասնագիտության գծով ռեֆերատի շուրջ անցկացված հարցազրույցի արդյունքների վերաբերյալ թեկնածուի հետ,
- Քաղվածք ամբիոնի նիստի արձանագրությունից,

- Նպատակային ասպիրանտուրա դիմողների համար՝ նամակ կազմակերպության կողմից և հովանավորող նամակ, որով վճարվում է ուսման վարձը:

Ընդունող հանձնաժողովը կայացնում է ասպիրանտուրայի ընդունելության քննությունների թույլատրման որոշումը հաշվի առնելով դիմողի հարցազրույցի արդյունքները ըստ համապատասխան ամբիոնի, որը տեղեկացնում է ընդունող հանձնաժողովին հարցազրույցի արդյունքների մասին: Ասպիրանտուրա ընդունվողները մասնակցում են մրցութային ընդունելության քննություններին (ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից և ՌԴ կրթության և գիտության նախարարության հետ համաձայնեցված ժամկետներում), որոնց ծրագրերը կազմում են բարձրագույն ուսումնական կրթության պետական կրթական չափանիշներին համապատասխան:

- մասնագիտություն
- փիլիսոփայություն
- օտար լեզու
- ինֆորմատիկա
- ինֆորմատիկա կամ համակարգչից օգտվելու հիմունքներ (ստուգարք)
- ռուսերեն (թելադրություն)՝ օտարերկրյա քաղաքացիների, այլ բուհերի շրջանավարտների (Հեռավոր Արևելքի) և ԱՊՀ երկրների քաղաքացիների համար (ստուգարք)

Հանձնաժողովը գնահատում է դիմողի գիտելիքների աստիճանը հինգ բալանոց համակարգով: Յուրաքանչյուր ընդունելության քննություն կամ ստուգարք գնահատվում է առանձին:

**Ասպիրանտուրա ընդունվելու քննությունների գնահատման չափանիշները՝**

Գերազանց՝ ունի հիմնական հարցերի վերաբերյալ խորը, հիմնավոր և համակարգված տեսական գիտելիքներ: Հարցերին տրված է գրագետ, տրամաբանորեն ճիշտ ներկայացված պատասխան:

Լավ՝ բավականին լիակատար տեսական գիտելիքներ անհրաժեշտ գիտական տերմինոլոգիայի վերաբերյալ՝ չնչին սխալներով:

Բավարար՝ գիտելիքների ընդունելի մակարդակ՝ զգալի սխալներով:

Ստուգարք՝ գիտելիքների բավարար մակարդակ

Չհանձնած ստուգարք՝ գիտելիքների բացակայության և անընդունելի մակարդակի դեպքում:

Ասպիրանտուրա դիմողը մասնագիտությունից բավարար գնահատական ստանալու դեպքում չի ընդունվում ասպիրանտուրա:

Ասպիրանտուրա են ընդունվում այն անձինք, որոնք ունեն ընդունելության ստուգարքների և քննությունների արդյունքով ամենաբարձր գնահատականները:

Հավասար գնահատականների դեպքում ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն առավել բարձր գնահատական մասնագիտությունից:

Ընդունելության քննությունները անցկացվում են բանավոր և գրավոր, ինչպես նաև համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ: **Ըստ ՀՀ գիտության և կրթության կողմից տրամադրված տեղերի ասպիրանտուրա ընդունվողը պետք է հանձնի կենտրոնացված քննություններ օտար լեզվից և համակարգչային տեխնոլոգիաներից:** Անկախ կենտրոնացված քննություններից ասպիրանտուրա ընդունվողը պետք է հանձնի օտար լեզու և համակարգչային տեխնոլոգիաներ ՀՌՀ-ում:

Մասնագիտության ընդունելության քննությունը նախորդում է այլ առարկաների քննություններին: Օտարերկրյա քաղաքացիները՝ ի թիվս ԱՊՀ քաղաքացիների, հանձնում են նույն ընդունելության քննությունները, ինչ ՀՀ և ՌԴ քաղաքացիները:

Մասնագիտական քննությանը հարգելի պատճառով չներկայանալու դեպքում նշանակավոր է քննությունների հանձնման նոր օր և, համապատասխանաբար, տեղաշարժվում են այլ առարկաներից քննությունները՝ պահպանելով հանձնման հերթականությունը և ժամկետները:

**Առողջական խնդիրներ ունեցող անձանց համար ընդունելության քննություններն ու ստուգարքները՝**

- Առողջական խնդիրներ ունեցող ընդունվողների թիվը մեկ դասասենյակում գրավոր քննություն հանձնելիս չի գերազանցում 12-ը, իսկ բանավոր քննության դեպքում՝ 6-ը:
- Թույլատրվում է դասասենյակում ընդունելության քննություն կամ ստուգարք հանձնելիս առողջական խնդիրներ ունեցող ընդունվողներին, իրենց անհատական հատկանիշներից ելնելով, անհրաժեշտ տեխնիկական օժանդակություն ցուցաբերող կազմակերպության աշխատողների կամ ներառված անձանց ներկայությունը:
- Առողջական խնդիրներ ունեցող ընդունվողները կարող են ընդունելության քննություն կամ ստուգարք հանձնելիս օգտվել այլ տեխնիկական միջոցներից, որոնք իրենց անհրաժեշտ են՝ իրենց անհատական հատկանիշներից ելնելով:
- Խոսքի ծանր խանգարում ունեցող, խուլ, լսողության հետ խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված է ձայնն ուժգնացնող սարքավորում, իսկ ընդունելության քննություններն ու ստուգարքները անցկացվում են գրավոր:

Սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց նշված պայմանները տրամադրվում են ընդունելության դիմումի հիման վրա, ուր նշված է համապատասխան հատուկ պայմանների ստեղծման անհրաժեշտությունը:

Ընդունելության քննությունները չի թույլատրվում վերահանձնել: Հանձնված ընդունելության քննությունները գործում են մեկ օրացուցային տարվա ընթացքում: Ասպիրանտուրա ընդունվողը իրավունք ունի բողոքարկել ընդունելության քննության

արդյունքները: Բողոքարկման դիմումների ընդունումը տեղի է ունենում քննության օրը, և բողոքարկման արդյունքները հայտնի են դառնում նույն օրը:

Այն անձինք, ովքեր մասամբ կամ ամբողջությամբ հանձնել են թեկնածուական քննությունները, ասպիրանտուրա ընդունվելիս ազատվում են համապատասխան ընդունելության քննություններից:

Ասպիրանտուրայի ընդունելության քննությունների իրավունք ունեցող անձինք՝ աշխատանքից հեռացմամբ կամ առանց դրա, իրավունք ունեն 30 օր տևողությամբ հավելյալ արձակուրդի՝ աշխատավայրի միջին ամսեկան աշխատավարձի պահպանմամբ, քննություններին պատրաստվելու և դրանք հանձնելու նպատակով, ըստ ՀՀ աշխատանքային օրենսդրության: Արձակուրդի իրավունք տվող փաստաթուղթ է հանդիսանում ՀՌՀ ռեկտորի (պրոռեկտորի) կողմից ստորագրված տեղեկանքը առ այն, որ անձին թույլատրվում է հանձնել ընդունելության քննություններ (ուղարկվում է անձամբ):

Քննությունները հանձնելու հետ կապված, ինչպես նաև հետագա ապրուստի բոլոր ծախսերը հոգում է ասպիրանտուրա դիմողը:

### **Բողոքարկումների հանձնման և քննարկման ընդհանուր կանոնները**

Ասպիրանտուրա ընդունվողը իրավունք ունի դիմել վերաքննիչ հանձնաժողով, եթե իր կարծիքով խախտվել է ընդունելության քննության կամ ստուգաքննի անկացման կարգը և եթե նա համաձայն չէ ընդունելության քննության արդյունքում ստացած գնահատականի հետ: Բողոքարկման դիմումների ընդունելությունը կատարվում է քննության օրը, և բողոքարկման արդյունքները հրապարակվում են նույն օրը: Ընդունվողն իրավունք ունի ներկա գտնվել բողոքարկման քննարկման ժամանակ:

Բողոքարկումը քննելուց հետո վերաքննիչ հանձնաժողովը որոշում է կայացնում ընդունելության քննության արդյունքների գնահատականի փոփոխության կամ նույն գնահատականի պահպանման վերաբերյալ:

Նպատակային ասպիրանտուրա ընդունվող անձինք կնքում են պայմանագիր (ՀՌՀ-ի տրամադրության ներքո լինելու ուսման ավարտից հետո), հանձնում են ընդունելության քննությունները այն բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ գիտահետազոտական հիմնարկում, որտեղ նրանք անցնելու են պատրաստումը և որոնց հետ ՀՌՀ-ն ունի համապատասխան պայմանավորվածություն՝ համաձայնեցված ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՌԴ կրթության և գիտության նախարարության հետ:

Նպատակային ասպիրանտուրայում սովորող ասպիրանտների պատրաստման հետ կապված ծախսերը հոգում են բարձրագույն ուսումնական հաստատությունները, գիտահետազոտական հիմնարկները, որտեղ այդ ասպիրանտները պատրաստվածություն են անցնում:

Այս անձանց ասպիրանտուրա ընդունելությունը իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական հիմնարկների կողմից մրցույթից դուրս՝ խիստ հետևելով նպատակային ասպիրանտուրայի ընդունելության

կանոններին և այն ժամկետներում, որոնք նշվել են ընդհանուր հիմունքներով ընդունելության համար:

Դիմողը տեղեկացվում է ասպիրանտուրա ընդունվելու կամ չընդունվելու մասին ընդունելության քննությունների ավարտից և ընդունող (մանդատային) հանձնաժողովի որոշումից հետո:

Առկա ասպիրանտուրա ընդունված անձանց աշխատանքից հեռացումը կատարվում է ըստ ՀՀ աշխատանքային օրենսդրության:

Ընդունելության քննությունների արդյունքում ստացած բալերի քանակի հաշվին ընդունված առկա ասպիրանտների կրթաթոշակը վճարվում է ընդունելության օրվանից, բայց ոչ ավելի շուտ քան նախորդ աշխատանքից հեռացումից հետո:

Ընդունելության քննությունների արդյունքում ստացած բալերի քանակը նշող ընունելության հրամանը (հրամանները)՝ ինչպես ընդունելության քննության գնահատականներով անվճար, այնպես էլ վճարովի ծառայությունների տրամադրման վերաբերյալ պայմանագրերից էլնելով, զետեղվում են կազմակերպության պաշտոնական կայքում և փակցվում են ընդունելության հանձնաժողովի տեղեկատվական ցուցանակին հրապարակման օրը: